

**21-րդ դարասկզբի համաշխարհային տնտեսական ճգնաժամը  
ԵՎ ՆՐԱ ԱՌԱՋԱՑՄԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՊԱՏՃԱՌՆԵՐԸ**

**Ա. Ա. ԿՈՒՐԱՏԱՇՎԻԼԻ**

Հոդվածում քննարկվում են 21-րդ դարասկզբի համաշխարհային տնտեսական ճգնաժամի առաջացման հիմնական պատճառները: Ըստ հեղինակի՝ այդ պատճառները պետք է փնտրել աշխարհի զարգացած կապիտալիստական երկրների վարած քաղաքականության և այն համոզմունքների մեջ, որոնք ընկած են այդ քաղաքականության հիմքում:

**WORLD ECONOMIC CRISIS AT THE BEGINNING OF THE XXI CENTURY  
AND THE DIAGNOSIS OF PRINCIPAL CAUSES OF ITS OCCURRENCE**

**A. A. KURATASHVILI**

In scientific work are investigated principal causes of occurrence of a world economic crisis at the beginning of the XXI century which, on belief of the author, is necessary to search, first of all, in political management of the developed capitalist countries of the world, and also in those scientific ideas on which is based political management of these countries where the world economic crisis has begun.

**ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ  
ԱՆՀԱՄԱՄԱՍՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԵՂՄԱՑՄԱՆ  
ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ  
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ**

**Հ. Ս. ԶԱՔՈՅԱՆ**

*Տնտեսագիտության թեկնածու, ԳՊՀ պրոֆեսոր*

**Ա. Վ. ԲԱՐՍԵՂՅԱՆ**

*Մանկավարժական գիտությունների թեկնածու,  
ԳՊՀ դոցենտ*

Անկախության առաջին տարիներին ՀՀ տնտեսությունը ունեցավ հսկայական ետընթաց, բայց սկսած 1994թ-ից ՀՀ տնտեսական ոլորտում զարգացման միտումներ նկատվեցին, և արդեն 2002-2007 թվականներին արձանագրվեցին համախառն ներքին արդյունքի (ՀՆԱ) երկնիշ թվերով՝ 10.5-14 տոկոսի միջակայքում տատանվող, աճի տեմպեր:

Այդպիսի ցուցանիշներ նվաճելը խոշոր ձեռքբերում պետք է համարել, քանի որ դրանք թույլ տվեցին հաղթահարել անցումային շրջանի դժվարությունների մի մասը: Մասնավորապես, ըստ ՀՀ ազգային վիճակագրական ծառայության (ՀՀ ԱՎԾ) հրապարակած տվյալների, ՀՀ-ում արձանագրվել է աղքատության զգալի կրճատում՝ 1999թ-ի **56.1** տոկոսից հասնելով **23.5** տոկոսի՝ 2008թ-ին:

Սակայն մայրաքաղաք Երևանում տնտեսական զարգացումը տեղի ունեցավ ընդգծված առաջանցիկ տեմպերով, և որպես արդյունք՝ 2008թ-ի ՀՀ ողջ արդյու-

նաբերական արտադրանքի մոտ կեսը, շինարարության ընդհանուր ծավալների և մանրածախ առևտրի շրջանառության շուրջ 85 տոկոսը, իսկ ծառայությունների ավելի քան 90 տոկոսը բաժին է ընկել միայն Երևանին: Դա այն դեպքում, որ մայրաքաղաքի բնակչությունը հանրապետության բնակչության մոտ 35 տոկոսն է կազմում<sup>1</sup>:

Ամենաարագ աճող ճյուղերի և դրանցում կատարվող ներդրումների, հատկապես մասնավոր ներդրումների, գերկենտրոնացումը Երևանում հանգեցրել է մայրաքաղաքի և այլ քաղաքային ու գյուղական բնակավայրերի միջև տնտեսական ակտիվության ու կենսամակարդակի ընդգծված տարբերության:

Այդ մասին են վկայում նաև ՀՀ ԱՎԾ կողմից 2004-2008 թվականներին անցկացրած «Տնային տնտեսությունների կենսամակարդակի ամբողջական հետազոտության» արդյունքները, որոնց համաձայն Երևան քաղաքում աղքատության մակարդակը հանրապետության գյուղական բնակավայրերի համեմատ 2.4-3.2 տոկոսով, իսկ այլ քաղաքային բնակավայրերի համեմատ 8.6 - 14.8 տոկոսով պակաս է եղել:

ՀՀ կառավարության 2008-2012 թվականների գործունեության ծրագրի հիմնական գերակայություններից է հանրապետության տարածքի զարգացման համաչափության ապահովումը:

Այդ ծրագիրը կյանքի կոչելու շնորհիվ, ի թիվս այլ ակնկալիքների, սպասվում է նաև.

- տարածքային տնտեսական անհամամասնությունների էական նվազեցում,
- ոչ գյուղատնտեսական զբաղվածության 10% աճ,
- Երևանի ու մարզերի միջև արտադրողականության և եկամուտների տարբերության էական կրճատում,
- բարձրլեռնային և սահմանամերձ շրջաններից բնակչության արտագաղթի կանխում:

Իսկ ի՞նչպես, ի՞նչ ճանապարհով է հնարավոր մեղմացնել այդ անհամամասնությունը, տնտեսության ո՞ր ճյուղի կամ ճյուղերի զարգացման համար կան բավարար նախադրյալներ ՀՀ մարզերում:

Բարձրացված հարցերին պատասխանելու համար նախ ուսումնասիրենք տնտեսության ճյուղային կառուցվածքն ըստ ՀՀ վարչատարածքային միավորների:

---

<sup>1</sup> Պարբերության մեջ օգտագործվել են ՀՀ ԱՎԾ հրապարակած տվյալները:

**2008 թվականին ՀՀ տարածքում ստեղծված ՀՆԱ  
բաշխվածությունը ըստ վարչատարածքային միավորների**

տոկոս

|   | Տնտեսության<br>ոլորտներ | Մարզեր    |        |         |             |      |        |       |         |           |        |       |                 |
|---|-------------------------|-----------|--------|---------|-------------|------|--------|-------|---------|-----------|--------|-------|-----------------|
|   |                         | Արագածոտն | Արարատ | Արմավիր | Գեղարքունիք | Լոռի | Կոտայք | Շիրակ | Սյունիք | Վայոց ձոր | Տավուշ | Երևան | Ընդամենը ՀՀ-ում |
| 1 | Արդյունաբերություն      | 8         | 8      | 4.5     | 1.4         | 5.7  | 12.2   | 2.4   | 13.5    | 0.8       | 0.7    | 49    | 100             |
| 2 | Գյուղատնտեսություն      | 6         | 3.1    | 5.1     | 14.2        | 9.9  | 10     | 10.1  | 9.1     | 4.3       | 5.5    | 1.1   | 100             |
| 3 | Շինարարություն          | 8         | 1.2    | 1       | 0.6         | 0.7  | 1.9    | 1.5   | 3.0     | 1.2       | 0.5    | 87.6  | 100             |
| 4 | Մանրածախ առևտուր        | 6         | 1.5    | 2.6     | 1           | 2.0  | 2.7    | 2.4   | 0.9     | 0.6       | 1.2    | 84.5  | 100             |
| 5 | Ծառայություններ         | 4         | 0.8    | 0.8     | 0.7         | 1.4  | 1.6    | 1.9   | 0.8     | 0.3       | 0.4    | 90.9  | 100             |

Աղյուսակի տվյալները ցույց են տալիս, որ գյուղատնտեսության ճյուղն է հանդիսանում մարզերի տնտեսական գործունեության հիմնական ոլորտը, որտեղ վերջին տարիներին, պաշտոնական տվյալների համաձայն, նկատվում է զբաղվածների նվազում թե՛ բացարձակ և թե՛ հարաբերական թվերով: Այսպես, եթե 2006թ-ին գյուղատնտեսական գործունեությամբ զբաղվողների թվաքանակը եղել է 504.3 հազ. մարդ (զբաղվածների 46.2 տոկոսը), ապա 2008թ-ին այն հասել է 493 հազարի (զբաղվածների 44.1 տոկոսի) կամ նվազել է 11300 մարդով: Անշուշտ, գյուղատնտեսության զարգացմանը զուգընթաց շարունակվելու է այդ ոլորտում զբաղվածների թվաքանակի կրճատման միտումը, և հարց է առաջանում, իսկ ո՞ր ոլորտներում կարող են իրենց աշխատուժը կիրառել ՀՀ մարզերի բնակիչները:

Նման ոլորտ, ինչպես ամբողջ աշխարհում, ՀՀ-ում համարվում է ծառայությունների ոլորտը:

Այսպես, եթե 1989թ-ին ԽՍՀՄ-ում արտադրական ոլորտում աշխատել է զբաղված բնակչության 72.2 տոկոսը, իսկ ոչ արտադրական ոլորտում՝ 27.8 տոկոսը, ապա ճապոնիայում այդ թվերը համապատասխանաբար կազմել են՝ 38 և 62 տոկոս, Արևմտյան Եվրոպայում՝ 31 և 69 տոկոս, իսկ ԱՄՆ-ում 23 և 77 տոկոս<sup>2</sup>:

Ուշագրավ է այն հանգամանքը, որ ՀՀ-ում 2008թ-ին 2006թ-ի համեմատ 4700-ով ավելացել է հյուրանոցային և ռեստորանային գործունեության մեջ զբաղվածների թվաքանակը:

Հայտնի է, որ ՀՀ տնտեսության համեմատաբար մրցունակ ու հեռանկարային ճյուղերի շարքին է դասվում զբոսաշրջությունը, և եթե 2008 թվականին ՀՀ ՀՆԱ-ի իրական աճի տեմպը կազմել է 6.8 տոկոս, ապա ծառայությունների ոլորտում այն հասել է 13.8 տոկոսի: Նույն ժամանակահատվածում զբոսաշրջության գոր-

<sup>2</sup> "ЭКОНОМИКА ПРЕДПРИЯТИЯ", Под редакцией проф. **О. И. Волкова**, Москва, Инфра-М, 1997.

ծակալությունների գործունեությունը, առանձին վերցրած, արձանագրել է 30.4 տոկոս աճ:

Ներկայացված թվական տվյալները հուշում են, որ մայրաքաղաք Երևանից դուրս ապրող ՀՀ բնակչության շուրջ 2/3-ի զբաղվածության և կենսամակարդակի բարձրացման «բանալին» որոնելիս չենք կարող շրջանցել զբոսաշրջության ոլորտը:

ՀՀ մարզերի հարյուրավոր համայնքների համար տնտեսության ներուժակ ճյուղ է հանդիսանում զբոսաշրջությունը, հատկապես՝ ագրոտուրիզմը:

Ներկայումս, մայրաքաղաքից բացի, զբոսաշրջությունը զարգացած է ՀՀ առանձին բնակավայրերում, որտեղ առկա են հանքային ու քաղցրահամ ջրեր, սպորտային մասնագիտացված ենթակառուցվածքներ և դրանց շուրջ կառուցված առողջարաններ, հյուրանոցներ ու հանգստյան տներ (Ծաղկաձոր, Ջերմուկ, Արզնի, Սևան, Դիլիջան և այլն): Կարճաժամկետ (առանց գիշերելու) այցելուներ են ունենում նաև պատմամշակութային հուշարժաններ ունեցող ոչ մեծաթիվ համայնքներ (Գառնի, Գեղարդ, Նորատուս, Հաղպատ, և այլն): Սակայն ագրոտուրիզմի զարգացման հնարավորությունները և արեալը շատ ավելի ընդգրկուն կարող է լինել:

Ագրոտուրիզմը գյուղական բնակավայրերում հանգստի անցկացման ձև է: Ագրոտուրիզմի սիրահարները կարող են հանգրվանել մասնավոր տնակներում, զգալ գյուղում ապրելու առավելությունները, վայելել գյուղական կյանքի հանդարտ տեմպը, մաքուր օդն ու կուսականին մոտ բնությունը: Այն հիմնալի հնարավորություն է նաև ծանոթանալու երկրի տարբեր հատվածների մշակույթին, ավանդույթներին ու կենցաղին: Ագրոտուրիզմը մի ոլորտ է, որը թույլ է տալիս գյուղական մշակույթն առևտրականացնել՝ դրան վաստակել՝ գյուղական կենցաղը դարձնելով զբոսաշրջիկների հետաքրքրության ու գայթակղության առարկա:

Ագրոտուրիզմը մեծ տարածում ունի Արևմտյան Եվրոպայում, Ավստրալիայում և Հյուսիսային Ամերիկայում, իսկ վերջերս սկսել է զարգանալ նաև Ռուսաստանում:

Ժամանակակից ագրոտուրիզմը գյուղական շինություններում հարմարեցված 3-4 տեղանոց սենյակներով չի կարող գրավիչ լինել, այլ դրա համար անհրաժեշտ են բարեկեցիկ և սարքավորումներով հագեցած մինի հյուրանոցներ: Ագրոտուրիզմի համալիրները հնարավորություն են ընձեռում իրենց հաճախորդներին զբաղվելու տարբեր սպորտաձևերով, ծիավարելու, այցելելու գյուղական տոնավաճառներ, հավաքելու դեղաբույսեր և սնվելու թարմ, ամառատ ու համեղ մթերքներով:

Ցանկության դեպքում ագրոտուրիստները կարող են կատարել նաև ոչ բարդ, ոչ ծանր գյուղատնտեսական աշխատանքներ և իրենց հետ որպես հուշանվեր տանել իրենց «ստեղծած» մթերքներից:

Համաշխարհային փորձը ցույց է տալիս, որ գյուղական բնակչության ներգրավումը տուրիստական բիզնեսի մեջ մեծապես նպաստում է նրանց բարեկեցության աճին, և Հայաստանն էլ այդ առումով բացառություն չի լինի:

Սակայն, ավելի առարկայական կարծիք հայտնելու համար, հարկավոր է ճշտել թե ՀՀ մարզերում ինչպիսի նպաստավոր և/կամ խոչընդոտող գործոններ են

առկա ագրոտուրիզմի բիզնեսի կազմակերպման համար:

Որպես նպաստավոր գործոններ կարելի է առանձնացնել.

- պատմական հուշարձաններից շատերի (եկեղեցիներ, ամրոցներ, տաճարներ և այլն) գտնվելը գյուղական վայրերում,

- կլիմայական պայմանների բազմազանությունը, մաքուր օդն ու բարձրորակ՝ հաճախ օրգանական սննդամթերքի առկայությունը,

- կենցաղավարման պապենական ավանդույթները՝ ձձուռն խփել, թոնրում լավաշ թխել ու կերակուր պատրաստել, սայլով շրջել և այլն:

Վերոնշյալ նպաստավոր գործոնների հետ մեկտեղ առկա են նաև հետևյալ խոչընդոտները.

- Երևանի սահմաններից դուրս խիստ սահմանափակ են տուրիզմի ոլորտին պիտանի որակավորում ունեցող աշխատանքային ռեսուրսները,

- Երևանից դուրս բարձրակարգ կացարանները և ենթակառուցվածքները գրեթե բացակայում են,

- գյուղական վայրերի սոցիալական ոչ բարվոք վիճակը,

- ՀՀ բնության աղտոտվածությունը:

Վերջին խումբ գործոնների բացասական ազդեցությունը նվազեցնելու և ՀՀ տարածքներում ագրոտուրիզմի զարգացման նպաստավոր պայմաններ ստեղծելու նպատակով անհրաժեշտ է.

1. հանրակրթական դպրոցների ուսումնական ծրագրերում տեղ հատկացնել տուրիզմի գործունեության լուսաբանմանը,

2. միջնակարգ մասնագիտական ուսումնական հաստատություններում՝ մասնավորապես մարզերում գործող գյուղատնտեսական քոլեջներում, պատրաստել «ագրոտուրիզմի կազմակերպման» մասնագետներ,

3. ՀՀ զբոսաշրջության գործակալությունների աշխատակիցների և նրանց հետ համագործակցելու պատրաստականություն հայտնաձևելու մարզերի բնակիչների համար կազմակերպել դասընթացներ և փորձի ընդօրինակման այցելություններ այլ երկրներ,

4. հատուկ պայմաններով հիպոթեկային վարկեր տրամադրել այն անհատներին ու կազմակերպություններին, որոնք կնախաձեռեն ժամանակակից ագրոտուրիզմի պահանջներին համապատասխանող պայմանների ստեղծումը ՀՀ մարզերում,

5. հարկային արտոնություններ սահմանել հեռավոր բնակավայրերում ագրոտուրիզմի ոլորտում մասնավոր ներդրումներ կատարողների համար,

6. պետության ֆինանսավորմամբ առաջանցիկ տեմպերով կառուցել ու վերականգնել արտադրական ու սոցիալական ենթակառուցվածքները ագրոտուրիզմի զարգացման տեսանկյունից ներուժակ տարածքներում,

7. բարելավել բնակավայրերի բնապահպանական վիճակը՝ դրանցում կենսագործունեությունը կազմակերպելով բնապահպանական պահանջների հիման վրա:

Նշված միջոցառումների իրականացմամբ կհաջողվի բարելավել կյանքի որակը ՀՀ մարզերում և նպաստել տնտեսության բազմազանեցման հրատապ համարվող խնդրի լուծմանը:

## ВОЗМОЖНОСТИ СМЯГЧЕНИЯ НЕПРОПОРЦИОНАЛЬНОСТИ РЕГИОНАЛЬНОГО ЭКОНОМИЧЕСКОГО РАЗВИТИЯ В РЕСПУБЛИКЕ АРМЕНИЯ

*Г. С. ЗАКОЯН, А. В. БАРСЕГЯН*

Статья посвящена проблеме, имеющей первостепенное значение для развития РА — возможностям смягчения непропорциональности регионального экономического развития.

## REGIONAL ECONOMIC DEVELOPMENT DISPROPORTION MITIGATION OPPORTUNITIES FOR THE REPUBLIC OF ARMENIA

*H. S. ZAKOYAN, A. V. BARSEGHYAN*

The article refers to a development problem of primary importance for the Republic of Armenia, that is the regional economic development disproportion mitigation opportunities.

## ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ «ՎՃԱՐՈՒՆԱԿՈՒԹՅՈՒՆ» ԵՎ «ԻՐԱՑՎԵԼԻՈՒԹՅՈՒՆ» ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲԱՑԱՀԱՅՏՄԱՆ ՄԻ ՔԱՆԻ ՀԱՐՑԵՐ

**Վ. Յ. ԱՌԱՔԵԼՅԱՆ**

*Տնտեսագիտության թեկնածու, դոցենտ*

**Ն. Է. ԳԱՐՐԻԵԼՅԱՆ**

*Լաբորանտ*

Շուկայական տնտեսության պայմաններում կազմակերպությունների կառավարման համակարգում իր առանձնահատուկ տեղն ունի տնտեսական գործունեության վերլուծությունը, որի արդյունքները հնարավորություն են տալիս կառավարիչներին մշակելու ինչպես կազմակերպության զարգացման ռազմավարությունը և մարտավարությունը, այնպես էլ կայացնելու արդյունավետ կառավարչական որոշումներ:

Ուստի այն առանցքային դեր ունի կազմակերպության կառավարման և ներքին վերահսկողական համակարգի, նրա շրջակա միջավայրի (ներքին և արտաքին) ուսումնասիրման համար: Հայտնի է, որ կազմակերպության հուսալիությունը և գործարար ակտիվությունը բնութագրվում է նրա ֆինանսական դրությամբ, որը հանդիսանում է շուկայի մասնակիցների շահերի իրագործման երաշխիքը: Պարզ է, որ տվյալ դեպքում խոսքը վերաբերվում է կազմակերպության վճարունակությանը: Հատկանշական է, որ որոշ տնտեսագետների մոտ, ոչ էական տարբերություններով, վճարունակությունը և իրացվելիությունը նույնացվում են պարտավորությունները կատարելու ունակության հետ: Այսպես, ըստ Վ. Վ. Կովալովի՝ որպես վճարունակության հիմնական հատկանիշներ, կարելի է ա-